



234. Կնիք Գեորգայ Մլեհի.

Մլեհ ընկեր էր Աշոտոյ վիթխարի հսկայի՝ որ յելս կոյս Թ դարու՝ եկն ՚ի Կ. Պօլիս, եւ զօրավար կարգեալ՝ յետ ամաց մարտեաւ քաջութեամբ եւ անկաւ ՚ի պատերազմին Բուլղարաց. իսկ Մլեհի զերծեալ եւ դարձ արարեալ ՚ի կողմանս Կապպադովկիոյ եւ Եփրատացոց, կորզեաց յԱրաբաց գերկոսին ամուր տեղիս, զԼիկանդոն եւ զԾամանդի բերդ. որք եւ ՚ի շնորհս նորա՝ կարգեցան յառանձին թեմ, ըստ օրինաց վարչութեան Բիզանդացոց. ընդ որս յաւելաւ նմա եւ տեսչութիւն գաւառին Մամեստիոյ. որպէս վկայէ կնիքն, ունելով զայս վերտառութիւն ՚ի յոյն լեզու. Գեորգ Մլեհ Պռոտոսպար եւ արքունի զօրապետ, (տեսույ) Մամեստիոյ, Անագարբայ եւ Ծամանդեայ: Աւելի քան զքառասուն ամ կացեալ Մլեհի ՚ի սպասու կայսերաց՝ բազում զործովք արութեան, վախճանեալ է իբր յամի 933:

44. Ռուբէն Ա.– Ընդ կարծողսն զսա ազգակից Բագրատունեաց եւ յերկրէ նոցին, համաձայնի եւ Մարտիրոս Վ. Ղրիմեցի ՚ի չափաբան համառօտ գաւազանագրութեանն.

«Պարոն Ռուբէն՝ զարմէ նոցին,  
 Զիշխանութիւն պահէ ազգին.  
 Զըւեալ յԱնուոյ տարագնային  
 Գայ ՚ի յաշխարհն Կիլիկիէն»:

ԶԺամանակ զալստեանն՝ հնագոյն ժամանակագիր հաւաստէ, զոգջիր եւ կանխէ իսկ՝ քան զգալուստ Գագկայ ՚ի Փոքր Ասիա, գրելով յամի 1045. «Ի ՆՂԴ թուականութեան Հայոց էառ Ըռուբէն իշխան զԿիլիկիա յայլասեռից»: